

Նարինե Հովհաննիսյան,
բ.գ.թ., դոցենտ, ԱրՊՀ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆԵՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՐԾԱՆՄԱՆ ՀԻՄՆԱՊԱՏԱՆՈՒՆԵՐԸ ԵՂԻՇԵՉԱՐԵՆՑԻ
«ԵՐԿԻՐ ՆԱԻՐԻ» ՊԱՏՄԱՎԵՊՈՒՄ**

Հորվածը նվիրված է Հայաստանի առաջին հանրապետության կործանման հիմնապատճառների քննությանը՝ ըստ Ե. Չարենցի «Երկիր Նաիրի» պատմաքաղաքական վեպի: «Երկիր Նաիրի» -ն սովորական վեպ չէ. գերարվեստով գաղտնագրված վավերագրություն է, երգիծական երկ չէ. մեծ հայրենասերի նորագույն ողբն է՝ գրված պատմական հայրենիքի կորուստի առթիվ: «Երկիր Նաիրի»-ն խաբված և ստրկության դատապարտված ժողովրդի պատմության ողբերգ է, ինչպես և Աբովյանի «Լիրք Հայաստանի»: Խորհրդային տիրապետությանը չի վերջանում Չարենցի ողբը, ինչպես չէր վերջանում Աբովյանի ողբը թուսական տիրապետությանը:

Բանալի բառեր՝ ողբերգավերգիծական, պատմաքաղաքական, բոլշևիկյան հեղափոխություն, ավատներկություն, դատախազություն, նահանգ, կոտորած, պատմական հայրենիքի կորուստ:

Наринэ Аванесян,
к. ф. н, доцент, Арцахский государственный университет

**ПЕРВОПРИЧИНЫ РАЗВАЛА ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИИ В ИСТОРИЧЕСКОМ РОМАНЕ
Е. ЧАРЕНЦА “СТРАНА НАИРИ”**

Статья посвящена исследованию первопричин развала первой республики Армении согласно историческому роману Е. Чаренца “Страна Наири”. Роман “Страна Наири” не обычный исторический роман, это художественное произведение, это не сатирическое произведение, это новая скорбь патриота, написанная о потери исторической родины. “Страна Наири” это скорбь обманутого и обреченного на рабство народа, как и произведение Х.Абовяна “Раны Армении”. Как не заканчивается скорбь Чаренца советским периодом, так скорбь Абовяна не заканчивается периодом правления Российской империи.

Ключевые слова: сатирический, исторический и политический, большевистская революция, ложная информация, дезертирство, изъятие, уничтожение, потеря родины.

Narine Hovhannisyann,
Candidate of Philological Sciences, Associate Professor,
Artsakh State University

**THE ROOT CAUSES OF THE COLLAPSE OF THE FIRST REPUBLIC OF ARMENIA IN CHARENTS’
HISTORICAL NOVEL “LAND OF NAIRI”**

The article investigates the root causes of the collapse of the First Republic of Armenia in accordance with Charents’ historical novel “Land of Nairi”. The novel “Land of Nairi” is not an ordinary historical novel, it is a work of art, it is not a satirical work, but patriot’s new grief, written about the loss of his historical homeland. “Land of Nairi” is the grief of the deceived and doomed to slavery people, like the work of Abovyan “Wounds of Armenia”. Just as the sorrow of Charents’ does not end during the Soviet period, neither Abovyan’s sorrow ends during the reign of the Russian Empire.

Keywords: satirical, historical and political, the Bolshevik Revolution, false information, desertion, withdrawal, destruction, loss of homeland.

Հայ հանճարի բացառիկ անհատականություններից մեկի՝ Ե. Չարենցի ստեղծագործական ճանապարհը չարենցագիտության մեջ նույնքան տարակարծությունների, հակասական մեկնաբանությունների, բուռն բանավեճերի տեղիք է տվել, որքան երկիր Նաիրիի կործանման հիմնապատճառները՝ պատմագիտության մեջ: Չարենց լինելը բախտ էր. ժամանակը դարձրեց ճակատագիր, բայց Չարենցը բարձրացավ և՛ ժամանակից, և՛ ճակատագրից: Երկիր Նաիրիի Չարենցի համար սուկ դավանանք չէր, նրա արյան, մտքի և հույզի զարկերակն էր, երբ մաքառում էր կամավորական ջոկատներում, հեղափոխական խանդավառ շարքերում, երբ գաղափարապես շնորհված էր իր ճանապարհից, երբ մահվան տնսիլով Գողգոթայի խաչն էր կրում: «Կապուտաչյա հայրենիք» պոեմում՝ գրված կարսում 1915թ., Չարենցը նույնանալով ծննդավայրին, երազում էր իր «սիրտուհուն»՝ իր երկրորդ կնիքին՝ Արևմտահայաստանին՝ հավատով խոստանալով.«Կապուտաչյա սիրտիս, ամուսնանանք պիտի մենք...»: Այդ ամուսնությունը այսինքն՝ երկատված, երկփեղկված հայրենիքի միավորումն այդպես էլ չկայացավ: Դա մեր ազգային ողբերգությունն է, որ նաև Չարենցի անձնական ողբերգությունն էր: «Էլի ես որք ու արնավառ՝ իմ Հայաստան յարն եմ սիրում», - սա արդեն Չարենցի երդում-հավաստիացումն է՝ գրված 1920թ.՝ Հայաստանի Խորհրդայնացման նախօրեին:

«Երկիր Նաիրի». այսինքն՝ անկախ և միացյալ հայրենիք. այս գաղափարապաշտության ցմահ ուխտավորն են Եղիշե Չարենցը՝ որպես ազգային հավաքական հանճար, և Հայ հեղափոխական դաշնակցությունը՝ որպես ազգային հավաքական ուժ: Ուստի դեպի Նաիրի տանող ճանապարհին նրանք կամա-ակամա պիտի խաչվեին այն կետում, որ տաճարն էր իրենց հավատամքի: Ապագույցը՝ «Երկիր Նաիրին»՝ գրված 1921-1924 թթ.՝ Չարենցի «ձախ որոնումների» ամենաբուռն շրջանում: Ողբերգական, անեղ, մահացու ճշմարտությունը թողին հանձնելու համար Չարենցը գիտակցաբար պիտի գնար օրվա ճանապարհով: Ժամանակի գովքն անող անմուսա երկերի հանգույցում ոգու կանչով և պարսոքով հառնում է արմնանման վիթխարի ասքը՝ «Երկիր Նաիրի» -ն. «Լալարո՛ց,

վաղուց մտորում է իմ մեջ մի անհուն ցանկություն: Վաղուց ելք է փնտրում կուտակված մի կարոտ: Գորշ, ամենօրյա, առօրյա մեր կյանքում, կենցաղում մորմոքում է նա մուլթ, աներևույթ, կանչում է, ո՞ր: Ինչո՞ւ է խնդրում ինձ, ինչո՞ւ է կարոտը խնդրում: Ինչո՞ւ է կանչում - մտերիմ, կանչում անվերջ: Եվ ես ինչո՞ւ եմ ուզում, ինչո՞ւ եմ կամենում փնտրել, գտնել նրան...»:

«Երկիր Նաիրի»-ն սովորական վեպ չէ. գեղարվեստով գաղտնագրված վավերագրություն է: Երգիծական երկ չէ. մեծ հայրենասերի նորագույն ողբն է՝ գրված պատմական հայրենիքի կորուստի առթիվ: Վեպի երգիծական-սատիրական ըմբռնման՝ արդեն ավանդական դարձած միօրինակությունը չարենցագիտության մեջ ճեղքեց Դ. Գասպարյանը՝ վիճարկելով գրականագիտական առկա դիտարկումները. «Իր բնույթով այն ըստ ամենայնի դրամատիկական է ու ողբերգական, իսկ երգիծանքը թեթև շղարշ է, հնչերանգ, պատումի ոճ, բայց ոչ միանշանակ ծաղր ու ծանակ»¹:

Վեպի հարցադրումը Չարենցը տալիս է առաջաբանում. «Ո՞վ ենք մենք, վերջապես - նաիրցիներ: Ի՞նչ ենք մենք և ո՞ր ենք գնում: Ի՞նչ ենք եղել երեկ և ի՞նչ պիտի լինենք վաղը»: Վեպն ամբողջությամբ այս հարցադրման պատասխան է, միաժամանակ բացարկյալ ուղեղամորմոք այն կասկածի, թե «գուցե ճիշտ որ միբաժ է Նաիրին, ֆիկցիա, միֆ. ուղեղային մորմոք. սրտի հիվանդություն... Իսկ նրա փոխարեն - կա այսօր մի երկիր, որ կոչվում է Հայաստան, և այդ հին երկրում ապրել են երեկ և ապրում են այսօր շատ սովորական մարդիկ՝ սովորական մարդու չարենցագիտություններով: Եվ ուրիշ - ոչինչ: Ոչ մի «Երկիր Նաիրի» - այլ միայն - մարդիկ, որ ապրում են այսօր աշխարհի այն անկյունում, որ կոչվում է Հայաստան, որը հիմա դարձել է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն, իսկ 1917-ից առաջ ոչ այլ ինչ էր, քան ոչ Ռուսական Իմպերիայի մի հետամնաց ծայրամասը - և ուրիշ ոչինչ... Ուրիշ ոչինչ»:

Այսպես արմատավիժ էր արվում Նաիրիի պատմությունը, ժողովրդի դարավոր հիշողությունը: Այդ ջնջվող ժամանակատարածականը վերականգնելու մղումով է գրվել «Երկիր Նաիրի»-ն, գրվել է որպես մարտահրավեր, որ «Չի կարելի ուղեղային մորմոք ու սրտի հիվանդությունը հանել մարդկանց միջից արցանների ու լանցնտների օգնությամբ»:

Վեպը բաղկացած է երեք մասից՝ «Քաղաքը և բնակիչները», «Ինչի՞ Նաիրի», «Երկիրը Նաիրի», առաջաբանից ու վերջաբանից:

Առաջին մասում պատկերանում է հինավուրց Կարսը՝ որպես Նաիրի երկրի խորհրդանիշ, իր բնակիչներով, նիստ ու կացով, պատմաճարտարապետական հուշարձաններով, որոնք իրենց գոյությունից վերածվում են ոգեղենի՝ դառնալով նաիրյան ոգու խորհրդանիշեր, մանավանդ Կարսի անխորտակելի բերդը՝ որպես ազգային ներքին անպարտելի ուժի քարակարկառ կոթող: Մի կողմից անառիկ բերդ-ամրոց և նույնքան անառիկ ազգային ոգի, մյուս կողմից՝ ամոթալի, ծանր պարտություններ և պատմական ծննդավայրի անշարժելի կորուստ:

Խիզախելով վարչակարգի պարտադրած ուղեփակոցների դեմ՝ Չարենցը բացում է պատմական դառը ճշմարտությունը. ինչո՞ւ ընկավ Նաիրին, երբեմն ուղղակիորեն, երբեմն այլակերպ, բայց ոչ երբեք երգիծանքով, վատա, որ «հասկացողը կհասկանա». «Անառիկ է այդ բերդը - ամենքն այդ գիտեն, - և դավաճանությունն է, նենգ, ստոր, նաիրյան դավաճանությունն է այդ բերդը հանձնել եկվոր արիկաներին: «<> Օրը կզատ, - և նրանք կզանա: Եվ նորից բերդի անառիկ ամրություններից որպես երկաթյա ահեղ մի սպառնալիք - կեննե, կհառնե ահասատո նաիրյան ոգին, կորովը, ուժը հազարամյա - նաիրյան աշխարհի: Ու կվառվի նորից անմար խնդրությամբ, կծպտա խնդագին երկիրը հազարամյա - երկիրը Նաիրի...»: Չարենցը դառնում է պատմության ուղեկից, ինքնաբացահայտում գաղափարապես և զգայապես, ընթերցողին հասու դարձնում ազգային ոգու պատմությունը: Վեպի գործողությունների առանցքը «նաիրյան գործերի կենտրոնն է», այսինքն՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը, որի ներկայացուցիչները պատմական անձնավորություններ են: Ահա նրանք. «Լույս» նախարարության անդամները՝ Վահագնյանը, Աստվածատրյանը կամ նաիրյան գործերի Արամազդը ընկ. Վառչյանը և Մերգե կապալիչը: Չարենցը հավելած չէր հերոս փնտրելու, բայց դեպի ճշմարտություն տանող ճանապարհին ինքնընտանացալից վեպի հերոս է դառնում Մազուրի Համոն՝ «ղժբախտ ու հերոսական»: «Եվ չէի՛ն, չէի՛ն կարող, այո՛, այդ դժբախտ օրերը չձնել անձնավորություններ՝ դժբախտ ու հերոսական: Չէր կարող, օ՛, ո՛չ, այդ դժբախտ օրերի, տարիների հրից չելնել հերոսական, չհառնել պայծառ ու սրբացած Նաիրյան ոգին»: Այս տողերին հաջորդում է գրողի անդրադարձը հայրենիքի համար կախաղան բարձրացած Մազուրի Համոյին: Հիշենք, որ 1920 թ. գրված «Մահվան տնայի»-ում բանաստեղծն ինքն էր ուզում դառնալ կախաղանից օրորվող եղերական վերջին գոհը, միայն թե փրկվի գերագույնը՝ Նաիրին:

Կոմունիստական գաղափարախոսությունը իր կնիքն է դրել խորհրդային մտքի ու մտածողության վրա՝ ձևավորելով մի ամբողջ դարոց: Չարենցը չէր կարող երգիծել-ծաղրել, ինչպես գտնում են որոշ քննադատներ, ազգային հավաքական այն ուժին, որ մտքի, խոհի և կամքի խորհրդանիշ բռունցքով բոլորանվեր լծվել էր հայրենիքի ազատագրման գործին՝ գիտակցորեն պատրաստ ինքնագոհաբերման: «Ներհանրապետական սուր, անողորմ մտրակող է դառնում», գրում է Ս. Աղաբաբյանը - երբ անցնում է գավառական քաղաքի պատվելիների՝ Մազուրի Համոյի շքախմբի կողքից: Մազուրի - համոյական «ազգային իդեալի» չարենցյան պատկերավորումը հնչում է որպես մեղադրական թողոթ ու մահվան դատավճիռ»²:

Ամբողջ վեպում զգացվում է Չարենցի ներքին ակնածանքը Դաշնակցության հանդեպ: Բանաստեղծի բնորոշումով Դաշնակցությունը տիեզերական կառույց է, մտքերի, սրտերի և կամքերի հավաքականություն, ազգային ոգու գասումի և վրեժի արդար բռունցք: Իր գլխավոր հերոսին տալով Աստվածատրյան ազգանունը՝ բանաստեղծն ասես ակնարկում է, որ նա ի վերուստ կոչված նոր փրկիչ էր, որ պիտի փրկեր երկիր Նաիրին, քան չլինեին «հույս» բոլշևիկները: Պատահական չէ, որ վեպի վերջում իր հերոսի խաչելությունը Չարենցն ուղղակիորեն համեմատում է Քրիստոսի խաչելության հետ՝ հավասարության նշան դնելով մարդկության փրկության ճանապարհին խաչված Քրիստոսի և հայրենիքի փրկության ճանապարհին խաչված Համոյի միջև: Արամազդից Քրիստոս փոխակերպում - անցումը ազգային հզոր ոգու և ուժի խաչելությունն է՝ հարության խորհրդով ու ներքին հավատով:

Մեկ անգամ չէ, որ Մազուրի Համոյի կերպարում Չարենցը գտնում է ինքն իրեն: Այդ առումով չափազանց ուշագրավ է կարևոր է նաև Վ. Տերյանի «Մի՛ խաչանք մեզ ձեր վայրի, արջի գեղերին...» տողով սկսվող հայտնի բանաստեղծության երկտողի հիշատակումը՝ ազգային կորուստների խոր գիտակցումով և բոլոր արհավիրքների միջից վերստին հառնելու մեծ հավատով: Չարենցը նույն գուգահեռի վրա է դնում ազգային գաղափարական գործչին՝ Մազուրի Համոյին, և ազգային մեծ պոետին՝ Վահան Տերյանին՝ «Երկիր Նաիրի»-ի տառապյալ երգչին:

Դաշնակցական հերոսն ամենուր է՝ բանավտություններ վարելիս, կամավորներ հավաքագրելիս, կռվող կամավորների համար հանգանակություն կազմակերպելիս: Անտարբեր դավիճ, որ հետո զնցի նման պիտի կրծեր, ջրատեր նաիրյան շարքերի կոռ միասնությունը, Համոն ինքնամոռաց ճառեր է ասում՝ ոգիներ խանդավառելով հայրենիքի ազատագրման համար: Ազգային մեծ

¹ Դ. Գասպարյան, Եղիշն Չարենց: Հայոց բանաստեղծության մայրաքաղաքը, Ե., 1996, էջ 208:

² Ս. Աղաբաբյան, Եղիշն Չարենց, Ե., 1973, էջ 408-409:

նպատակի շուրջ համախմբվում են բոլորը՝ դաշնակցական թե՛ հնչակ, ժողովուրդը և եկեղեցի: Կամավորական խանդավառ խմբեր են գալիս հեռավոր Նյու Յորքից, Բուրյարիայից, Վանից, Բիթլիսից, գալիս են նախրյան բոլոր կողմերից: Դա, ինչպես Չարենցն է պատկերում, ազգային աննկարագրելի խանդավառ շարժում էր, որ ճեղք տվեց, սակայն, բոլշևիկների ապագային ձեռքով: Ահա հուսիկ քահանայի կողք, որ շատ բան է ասում ինչպես այդ օրերի, այնպես էլ Չարենցի քաղաքական վերաբերմունքի մասին. «Սուրբանակ, հանճարեղ են եղել նախրցի արքաները. նրանք իմացել են կապել հոգևորն ու մարմնավորը, սուրը և խաչը կրոնն ու ռազմական կորովը: Ստոր, նենգ, նասական դավաճանությունն է եղել մեզ կործանողը, անձնատու վասակներն են եղել մեր տունը քանդողը: Լավ է մարդ պատկով ընկնի պատերազմի դաշտում իր սրբազան կրոնի ու հայրենիքի համար, քան քարշ տա անասնական զերություն, ինչպիսին քարշ ենք տալիս մենք հինգ դարից ավելի: Բայց ահա հասել է նորից վայրկյանը վերածնության, և դեպի նոր Ավարայր, նոր վարդանանց պատերազմ է կանչում իր բոլոր ազնիվ գավակներին մեր տառապյալ հայրենիքը...»:

Ակնհայտ է, թե՛ «վասակներ» անվանումով ում նկատի ուներ Չարենցը՝ ընթերցողին հասալ դարձնելով իր արգահատանքը վեպի բոլշևիկ հերոսների՝ Դաշնակցության անակզբունք հակառակորդների հանդեպ: Չարենցը հիշատակում է նաև ժողովրդի գիտակցության մեջ սրբազան ճանաչումը՝ Անդրանիկ, Դրո, Բենի. բոլորն էլ շարկապակած են «նախրյան գրասենյակին»:

Վեպի երկրորդ գլուխը Չարենցն ավարտում է անասելի բուռն ոգևորությամբ: Անբողջ կարսը՝ ծեր թե՛ մանուկ, կին թե՛ տղամարդ, խմբվել է կայարանում՝ դիմավորելու Նախրի մենկող կամավորական ջոկատներին: Դա նոր Ավարայր էր, երբ ամբողջ ժողովուրդն էր եղել սրբազնագույն նպատակի համար: Այդ բուռն ոգևորությունը, նվիրումի կամքն ու ռազմի կորովը հետո պիտի փոխվեին ճիշտ հակառակի՝ հաղթության արժանապատիվ երթից շրջադարձ կատարելով դեպի նահանջի կորստաբեր ուղին: Այդպես հանձնվեց և խարդավանքներով վերագրավվեց գրեթե ազատագրված երկիր Նախրին:

Վեպի վերջին գլուխը Չարենցը սկսում է նույն դառը հարցումով. ո՞րն է, վերջապես, երկիրը Նախրի: Եթե առաջաբանում Չարենցն այս հարցումին պատասխանում էր նույնչափ սրտմտող հարցումով՝ «գո՞րցն մշուշ է նա, ուղեղային մորմոք, սրտի հիվանդություն», ապա վեպի վերջում կասկածանքին հաջորդում է անվարան բացարկը: Պատմական իրական կարսը ներկայացնելով որպես երկիր Նախրի՝ Չարենցը հանգում է իր գլխավոր ասելիքին. «Մի՞թե կարող էր «ուղեղային մորմոքը» կերպավորվել և իրականություն դառնալ. մի՞թե կարող էր, սիրելի՛ ընթերցող, միս և մարմին ստանալ «սրտի հիվանդությունը» և քայլել քաղաքում, ո՛չ թե ուղեղում կամ սրտում, այլ իրական քաղաքում: Ձառանգանք չէր այդ քաղաքը, և ոչ էլ նրանում ապրողներն էին գառանգանք»: Այո՛, կար և մնում է իրական Նախրին՝ բոլոր նախրցիների բնիկ հայրենիքը, բայց որպես այդպիսին չկա ոչ մի աշխարհագրական քարտեզի վրա: Ուստի այն և՛ կա, և՛ չկա: Այդ լինել- չլինելու հանգամանքի մեջ Չարենցը դնում է իր և յուրաքանչյուր նախրցու արժանապատիվության հարցը: Չկա քարտեզի վրա երկիր Նախրին, բայց կա իրական և կա նաև արդեն խաչված Մագութի համոյի «ուղեղում», այսինքն՝ Դաշնակցության գաղափարի մեջ: Ուրեմն, Չարենցի համոզմամբ, «Նրան, այո՛, Մագութի համոյի ուղեղին մենք պիտի դիմենք, <...> եթե ուզում ենք իսկական ակունքից խմել կենսարար հեղուկը մեր հավաքական կամ իր՝ Մագութի համոյի տերմինոլոգիայով ասած՝ «ազգային գոյություն»: Սա էր նաև այն հավաքական ուժը, որի մեջ Չարենցը 1930-ական թթ. պիտի տեսներ մեր ժողովրդի փրկությունը և գրեթե իր խորախորհուրդը «Պատգամը»՝ «Ո՞վ է հայ ժողովուրդը, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»:

Հայրենիքը գոյատևում է նախ և առաջ ազգային գաղափարաբանությամբ, իսկ ազգային գաղափարախոսությունը կրող հավաքական ուժը Չարենցի վեպում Դաշնակցությունն է: Ազգային գաղափարախոսության՝ դեռ հայկից սերված «Մահ կամ ազատություն» նշանաբանով է, որ դարձրեց փոխանցվել է երկիր Նախրին. «Որովհետև նա՛ էր (ուղեղը և ոչ թե Մագութի համոն), որ տարիներ շարունակ բոլոր համանման ուղեղների կատարյալ կատարելատիպը լինելով՝ որպես առասպելական այն ցուլը, կրում էր իր ուղեղն եղջյուրների վրա... երկիրը Նախրի: <...> Տարիներ, դարեր շարունակ, հնամենի հնուց կրում էր իր եղջյուրների վրա մի ամբողջ երկիր, և այն էլ այնպիսի մի տիեզերական երկիր, ինչպիսին էր երկիրը Նախրի»: Բայց և Չարենցը սուր տագնապներ, ջղաճգումներ է ունենում, իր խաբերով՝ քարից քար խփվում, որովհետև գնդել, առասպել են դարձել և՛ իրական ծննդավայրը, և՛ պատմությունը, և՛ ազգային գաղափարաբանությունը: Ստացվում է, որ գուր խաբկանք է եղել ամեն ինչ. «ուղեղային մշուշ», «սրտի հիվանդություն»: Բայց հոգեկան ուժգին մակրոթագույթանք երբ հաջորդում է սթափ տեղատվությունը, Չարենցը հակասում է նորից ինքն իրեն՝ գրելով. «Նրան, միայն նրան, այսինքն ոչ թե Մագութի համոյին, այլ նրա հանճարեղագույն ուղեղին էր, այո՛, պարտական նախրյան այդ քաղաքը իր երկրային գոյությամբ, և առանց նրա, այսինքն ոչ թե Մագութի համոյի, այլ նրա ուղեղի, չէր կարող գոյություն ունենալ, անգամ մի երկվայրկյան ասքել ոչ միայն նախրյան այդ քաղաքը, այլև ամբողջապես հենց ինքը՝ երկիրը Նախրի»: Չե՛ս հավատում: Նայի՛ր շուրջդ ապա. ո՞ր է մեր նկարագրած քաղաքը, ո՞ր են նրա բնակիչները: Չկան, ծուխ են դարձել, գնդել են մշուշում. դարձել են մուժ ու հիշատակ: Ինչո՞ւ: Որովհետև չկա, այլևս գնդել է մշուշում Մագութի համոյի ուղեղը, չկա. մուժ է դարձել. դարձել է մշուշ ու հիշատակ»:

Վեպի երրորդ մասում Չարենցը գաղտնագերծում է մեր ազգային ողբերգության բուն ակունքները, ասելիքը հրապարակում ո՛չ ենթաշեղծաբան, այլ ուղղակիորեն: Այստեղ է, որ Չարենցն, ի վերջո, տալիս է քաղաքական պատասխանը ուղեղամորմոք այն հարցի, թե՛ ինչո՞ւ՝ ընկավ երկիր Նախրին: Հշմարտությունն այդ տարիներին հրապարակավ ասելու և իր քաղաքական վերաբերմունքն ի յուր ամենքի ճշտելու համար առնվազն պետք էր սխրանքի գնալ: Պատմական հավաստիությամբ Չարենցը ներկայացնում է հայրենիքի կորուստի քաղաքական պատճառները՝ ուղղակի ազգային դավաճանություն համարելով այդ օրերին հայ բոլշևիկների գործունեությունը՝ ի դեմս վեպի բոլշևիկ հերոսների՝ օր. Սաթյոյի, Կարո Դարայանի և Մարտին Դրաստամատյանի: Վեպի այս մասում է նաև, որ Չարենցը բացահայտում է իր գլխավոր հերոսի՝ Մագութի համոյի ողբերգական կերպարը: Ազգային նպատակի իրագործման ճանապարհին Չարենցի հերոսը հանուն Նախրի արտասովոր ինքնագոհողության է դիմում. համոն սեփական աչքերով տեսնում է քաղաքի ռուս պարենիսի իր կնոջ հետ իր իսկ ննջասննչակում: Երեկվում է վատասությունը, սեփական պատվախնդրությունը մոռացած՝ համոն տագնապում է Նախրի համար. նա, ում հետ պիտի ազատագրի երկիր հայրենին, բռնաբարում է իր ընտանեկան սրբությունը, և դա՛՝ ճակատագրական այն պահին, երբ, ինչպես Չարենցն է գրում, «ուղեղայինն արդեն երկրայինի պիտի փոխվեր. ուղեղայինը պիտի իրականանար»: Հիշտ այդպես բռնաբարվում է նաև Մագութի համոյի ազգային սրբությունը: «Քաղաքական իրադրությունն ինքնին դառնում է գավիշտական,- նկատում է Դ. Գասպարյանը,- և մահաշունչ ծաղրը տարածվում է ամեն ինչի վրա: Ուղեղային եղջյուրներից մինչև ամուսնադավության պղծեր մի քայլ է միայն ոչ միայն համոյի համար, այլև՝ ամբողջ երկիրը»¹: Ռուսական գործերը, ըստ Չարենցի, 1914 թ. առաջ շարժվելով և նահանջելով Արևմտահայաստանից, մեծ կորուստներ պատճառեցին՝ արևմտահայությանը թողնելով դարավոր ոտխի յաթաղանի ներքո: «Ձիերը, քարագած նիթերների նման,

¹ Դ. Գասպարյան, Եղիշե Չարենց: Հայոց բանաստեղծության մայրաքաղաքը, Ե., 1996, էջ 231:

տնկերում մնացին»։ Չարենցի ակնարկում Նիոբեն Մագույթի Համոն է, հունական առասպելի՝ գավակներին կորցրած մայրը, որ կերպարանափոխվում է արցունք թափող քարի։

Վեպում Չարենցի խոհերը շատ դեպքում արտահայտում է Մագույթի Համոն։ Ահա նորից շրջվում են քաղաքական խաղաղթերը, ցարական գործերը վերագրվում են «ներազյալ վայրերը»՝ հասնելով մինչև Էրզրում. կատարվում է Մագույթի Համոյի՝ դեմ պատերազմի նախաօրին կանխատեսումը, բայց բավականին ուշ, մեծ կորուստներից հետո. «Ինչո՞ւ հնարավոր չէր Էրզրումի գրավումը «յոթ» օրից. ո՞վ էր խանգարողը։ Ո՞վ կար դեմը կեցած, ի՞նչ գորավոր ուժ. ռազմի ի՞նչ կարողություն... Ո՞վ, ո՞վ վերցրեց վանը, եթե ոչ՝ Նաիրյան բանակը. ո՞վ վերցրեց նույն Էրզրումը... «Արիկանե՛ր, լրբե՛ր, դավաճանանե՛ր»- փրփուրը բերանին որոտում էր հաճախ, ձեռքը սնդանին խփելով, Տեղական կոմիտեի նիստերին Մագույթի Համոն»։ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը, ըստ Չարենցի վեպի, մեծ հեռանկարներ է նախագծում Նաիրիի կյանքում։ Դարավոր ռոմանտիկ էր եղել, թվում էր՝ հասնել է հայ ժողովրդի արյան հատուցման պահը, մարմնավորվում, իրականություն էր դառնում նրազյալ Նաիրին։ Բայց վրա է հասնում 1917 թ. ռուսական հեղափոխությունը՝ խորտակելով ազգային վերջին հեռանկարները։ Ռուսական հեղափոխությունից հենց Չարենցը սկսում է երկիր Նաիրիի կորուստի պատմությունը։ Յարական գործերը հետ են կանչվում Արևմտահայաստանից՝ հայ կամավորներին թողնելով միայնակ։ Բայց ռազմաճակատը քայքայող ամանամեծ չարիքը, ինչպես Չարենցն է փաստում, «դեզերտիկությունն» է։ Չարենցը մերկացնում է հայ բոլշևիկների ազգուրաց գործունեությունը, ինչի արդյունքում ջլատվում են նաիրյան բանակի շարքերը, և սկսվում է դասալիքություն, նահանջի և ազգային կորուստների ծանր ճանապարհը։ Չարենցն մտթ միջոցներով, զրպարտություններով, ստահող խոստումներով Չարենցի բոլշևիկ հերոսները «դեզերտիկություն» են քարոզում կոկող կամավորների և ժողովրդի շարքերում՝ առաջխաղացում ասպետներով դարավոր ռոմանտիկ համար։ Եվ ի՞նչ էին տարածում նրանք հայրենիքի ազատագրման նվիրյալների՝ Մագույթի Համոյի և նրա գաղափարակիցների մասին. իբր Մագույթի Համոն իր «Լույս» նավթարդյունաբերությունից արժանանալով նավթ է վաճառել դարավոր ռոմանտիկ, սակիներ դիզել իր ժողովրդի արյան հաշվին, իբր բժիշկ Սերգեյ Կասպարիչը սպանել է իր հիվանդ երիտասարդ կնոջը, որպեսզի ազատվի նրանից, և որ նա նաիրյան զեղեկություններ էր մատակարարել գաղտնի բաժանմունքի վարիչին։ Չարենցը բազմիցս հերքում է նման տեղեկությունների իրավագիտությունը, մատնանշում այդ խայտառակ, նենգ զրպարտությունների հեղինակներին. «Այսպիսի ահա չլաված ամբաստանություններ կային իրա- Համո Համբարձումովիչի և բժիշկ Սերգեյ Կասպարիչի հասցեին այդ միջակայքում, և մենք չենք կասկածում, որ այդ միջակայքում նամակը կարող էր այլ աղբյուր ունենալ, քան օր. Սաթյայի փչացած ուղեղը, որ, ի բնի փչացած լինելուց բացի, տարիներ շարունակ կրել էր իր վրա մի ավելի ևս փչացած, ավելի քան շնական ուղեղի - պ. Մարութի ուղեղի - ազդեցությունը»։

Ահա պատմական ամբողջ դառը ճշմարտությունը՝ Չարենցի անկաշառ մեկնաբանությամբ. «Ամեն ինչ փոխվել էր և ընդունել միանգամայն նաիրյան կերպարանք։ Նաիրին էր, հին, նրազյալ, հավիտենական Նաիրին, որ տարիների մոռոց, մշուշից ելած՝ առել էր իրական կերպարանք։ Եվ ամեն ինչ լավ էր գնում, նույնիսկ կարելի էր ասել, որ կատարյալ հանգիստ ու խաղաղություն կտիրեր նաիրյան այդ քաղաքում և շրջանում, եթե չլինեին մի շարք ստոր, անպատկառ, նաիրադավաճան մարդիկ, որոնք խանգարում էին նորաստեղծ նաիրապետության հանգիստը։ Եվ ո՞վ գիտե՞ կկատարվե՞ր արդյոք հեռագա դժբախտ ու ահավոր դեպքերը, եթե չլինեին այդ ստոր, անպատկառ, նաիրադավաճան մարդիկ։ Երևակայում ե՞ք՝ դրանք, այդ ստոր, դավաճան, անպատկառ մարդիկ, դեմ էին «գրավված վայրերի» պաշտպանության. ինչ-որ խաղաղություն էին պահանջում այդ ստոր, դավաճան, ազգուրաց մարդիկ, երբ դեմ չէր գեներալադամ ռոմանտիկ, ավելին, երբ իր վերջին հորդաները հավաքած՝ թափթփով բանակներով պատրաստվում էր «գրավված վայրերի» խուժել, վերստին հրի ու սրի մատնել այնքան դժվարություններով վերջապես ազատագրված երկիրը Նաիրի... Օ, ոչ մի անուն չէր կարելի դնել այդ նաիրուրաց տխրությունները, քան այն անունը, որ դրել էր Տեղական կոմիտեն, ո՞չ, «Ընկերությունն» ինքը, և այդ անունն էր, ինչպես քանիցս կրկնել ենք ի միջի այլոց, «Ազգային դավաճանությունը»։ Եվ ովքե՞ր էին դրանք, և ո՞վ էր դրանց ղեկավարը. <...> արյունարբու մի սկյուռ, ռազմած մի մոնոլո, մի գերմանական լրտես, որ պլոմբած վագոնով հայրենիք վերադարձած՝ չին գործերու և անվարտիք ավարաներու օգնությամբ ներսերում լսել էր արդեն իշխանությունն ու հանձնել այն գերմանացիներին՝ այսպիսով գլուխ բերելով իր այն խոստումը, որ տվել էր արյունարբու Վիլհելմ կայսեր...»։

Չարենցը բացում է իր օրերի պատմության մտթ փակագծերը, հայեցում և վերստին հայեցում նրանց, որ գեներալադամները մեր դարերի վատաբեր՝ ազգային պետականությունը՝ 1918 թ. Հայաստանի անկախ հանրապետությունը։ Խորհրդահայ չարենցագիտությունը շրջանցել է այս ամենը, բոլշևիկների վիպական կերպարված պատմական նախախիթերը։ «Ըստ երևույթին, - գրում է գրականագետ Հ. Թամրազյանը,- իսկական բոլշևիկների գործն ու պայքարը չէր հարմարվում երգիծական վեպի մտահղացմանը։ <<> Պ. Մարութեն, ըստ էության, իր ընկերակիցների հետ միասին, մնում է որպես դաշնակցության անպրիցիպ հակառակորդ։ Բայց նրանց միջոցով Չարենցը կատարում է որոշ մերկացումներ, բացում դաշնակցության գործունեության մտթ կետերը»¹։

Յուրայինների մատնությամբ գերեզմանները է արդեն ազատագրված Նաիրին, ռոմանտիկ թափթփով հորդաները հասնում են մինչև կարս։ Մագույթի Համոն գերմարդկային ճիգեր է գործադրում, հրատապ միջոցներ ձեռնարկում դեմ հնարավոր փրկության համար, բայց կործանումն անդարձ էր. «Հավիտենական Տիվանդի հորդաներից սարսած, Մահամերձի թափթփով բանակներից սարսափահար՝ նախիրների նման արև տվին նաիրյան բանակները»։ Կարսի բերդում առանց գործի մնացած Մագույթի Համոն ռդբում է՝ կեղերելով իրեն. «Ո՞ր է, ո՞ր է ուժը, ո՞ր է կորովը հնամյա նաիրյան ցեղի. ո՞ր է երկաթե բռնցքը... Ո՞ր է, - հարցնում էր՝ դառնացած Եհովայի նման մազերը պոկելով, Մագույթի Համոն. բայց պատասխան չկար. բերդի հազարամյա, մուսլ պարիսպներն էին միայն լուռ նայում Մագույթի Համոյին, վերջին այդ արքայակերպ նաիրցուն»։ Ուտիլ մտնում է արդեն վատկող քաղաքի դարպասներից ներս, սրի քաշում բերդաքաղաքում մնացած բնակչությանը։ Մինչև վերջին վայրկյանը իրենց դիրքերի վրա, եռագույն դրոշին հավատարիմ, մնում են Մագույթի Համոն, ընկ.Վառայանը, Սերգեյ Կասպարիչը։ Բերդի աշտարակի ամենաբարձր կետում՝ եռագույնի կողքին, նրանք գերեզմաններ են և, գարիտների գանահարանքի եկթարկվելով, խաչելության հանվում այն հեռագրասյունների վրա, որոնք մի քանի օր առաջ կանգնեցրել էին հայրենիքի դասալիքների համար։ Չարենցն իր պատմությունն ավարտում է խորհրդանշական պատկերով. Մագույթի Համոյի գլխավորում ռոմանտիկ մի տախտակ է փակցնում՝ վրան նաիրյան տառերով գրված՝ Մ.Հ.Ա.Ն., որ նշանակում է՝ «Մագույթի Համո՝ Արքա Նաիրի»։ Ճիշտ այդպես խաչելության էր հանվել յուրայինների կողմից մատնված մարդկության փրկիչը՝ Քրիստոսը, և խաչված Հիսուսի գլխավորում ևս գրված էր՝ Հ.Ն.Ա.Հ., այսինքն՝ Հիսուս Նագույթենցի՝ Արքա Հրեից։ Ի դեպ, դաշնակցության և Քրիստոսի խորհրդանշական պատկեր-անդրադարձն առկա է ոչ միայն Չարենցի վեպում, այլև դարակազմի հայ մտքի պատմության մեջ. «Ինչպես Նագույթենցու մեծությունը նրա մեջ չէ, որ պատմության

¹ Հ. Թամրազյան, Եղիշե Չարենց, Ե. 1981, էջ 269։

մեջ մի քանի փաստեր թողնեց, այլ որ զգայապաշտ մարդկության նոր իղնալներ տվավ և մի այլ աշխարհի կարտոտվ հոգիները վառեց, այնպես էլ մեր նորագույն պատմության այս հերոսներն ու առաքյալները արժեք դարձան ոչ թե իրենց հաջող կամ անհաջող կոչվելով, այլ նրանով, որ առաքինությունների մի նոր տալիսակ դրին իրենց ժողովրդի առջև»¹:

Չարենցի քաղաքական վերաբերմունքի տեսանկյունից կարևոր է նաև վեպի վերջաբանը: Սուսքի մի առիթով «համբավ» անվանելով իրեն՝ Չարենցը Նաիրիի մասին խոսքը վերջացնում է ողբերգա-երգիծական երանգով. «Նաիրունագրութի համոյական գարի, որ տեսնել էր մի անգամ երկարականջ քեռին իր այն նշանավոր երագուն»: Այսինքն՝ Նաիրին որպես նվիրական երագանք հարակայում է ոչ միայն Դաշնակցության գաղափարաբանության, այլև իր՝ Չարենցի էության մեջ:

«Երկիր Նաիրի»-ն գրականագիտության մեջ շատ է համեմատվել Աբովյանի «Վերք Հայաստանի»-ի հետ: Այդ առթիվ Ս. Աղաբաբյանը գրում է. «Չարենցը նույնպես գործ ուներ բացված վերքերի հետ, բայց նա տեսավ նաև ազգային վերածնության սկիզբը, ուստի և պետք է դիմեր գրնգուն, ցնծագին ուրախության ոճին»²: Չլիսելով անվանի գրականագետի այս դիտարկումը և մի կողմ թողնելով գրական բոլոր առնչությունները՝ նշենք միայն, որ «Վերք Հայաստանի»-ն և «Երկիր Նաիրի»-ն խաբված և ստրկության դատապարտված ժողովրդի պատմության ողբերգելի են, ազգային վերքի խոր հառաչանքներ: Ստրկության տիրապետությանը չի վերջանում Չարենցի ողբը, ինչպես չէր վերջանում «Հայրենասերի» ողբը ռուսական տիրապետությանը: Ինքը՝ Չարենցը, վեպում ընդգծված տառատեսակով գրել է. «Մտաչատուր Աբովյանը»՝ Վերք Հայաստանի, որը հայրենասերի « իր հայտնի վեպում պատմում է, թե ինչպես Լիդիագլոց կրնեսո թագավորի համր լեզուն բացվում է մայրենի լեզվի հրաշալի հրաշքով: Իմաստն այն է, որ հայրենագործ մարդու գոյությունը մի վերք է, մի յարա, իսկ մայրենի լեզուն՝ հրաշարաբ բազմակ: Կա կորույսյալ հայրենիքը, կա նաև կորույսյալ հայրենիքի լեզուն՝ որպես կորուստի հիշողություն, ինքնության ակունք, հոգևոր հիմք ու սկիզբ վերագտնում: Չունենանք, որ «Երկիր Նաիրի»-ն հիմնաքար եղավ կորույսյալ հայրենիքի գրականության ստեղծման ճանապարհին:

Ի՞նչը մղեց, սակայն, նաիրապաշտ պոետին «Երկիր Նաիրի»-ից հինգ տարի անց՝ 1929 թ., նաիրադավան կուսակցությանը հղելու «Դաշնակցականներին» բանաստեղծությունը: Առաջին հայացքից կարող է թվալ, թե Չարենցը տուրք է տվել ժամանակի հակադաշնակցական քաղաքականությանը, մանավանդ որ իր դեմ նագիծնալիստական մեղադրանքներ էին ուղղում: Մեր համոզմամբ, բանաստեղծության եմբռնությունը Չարենցը դրել է իշխող վարչակարգի գաղափարախոսությունը և այդ գաղափարախոսությանը հյու համակերպված սերունդի հոգեբանությունը.

-Մեզ ապի նրանք, որ կյանք մի վսեմ
Կերտելու համար հարկավոր է նախ
Ձեր դեմ մահացու պայքար սկսել,
Ձեզանից լինել հեռու և անկախ...

Պարզ է դառնում, թե իշխող կուսակցությունն ինչպես էր «ժողովրդի թշնամի» հռչակում ազգային կուսակցությանը՝ պաշտոնական քարոզչությանը գործելով նրա գաղափարաբանությունը խեղաթյուրելու և ոչնչացնելու ուղղությամբ: Բանաստեղծության վերջում Չարենցը գրում է, թե «Երգում է քնարն իմ պոնձաձույլ»: Ճատ չանցած՝ Չարենցը հրաժարվեց այդ քնարից և կրկին կանգնեց մեծ մայրուրու վրա: Այդպես էլ վերնագրեց հաջորդ գիրքը՝ «Գիրք ճանապարհի», որ նաև իր անցած ճանապարհի խոհերի գիրքն էր:

1933 թ., կրկին անդրադառնալով «Դաշնակցականներին» բանաստեղծությանը, Չարենցը գրում է «Մոնետ»-ը՝ բնաբան ընտրելով առաջինի «Օ, դուր որբալի՝ անակալեզներ» տողը: Նշենք, որ «Գիրք ճանապարհի»-ի «Արվեստ քերթության» շարքն սկսող այս բանաստեղծությունը նախորդում է «NOSTALGIA» երկմասանոց բանաստեղծությանը, nostalgia կամ կարտոսիստ՝ հեռվում մնացած հայրենիքի հանդեպ: Հայրենական ցավով հիվանդ պոետը մի ձեռքով հոգով երգում էր այն, ինչի ուխտավորն էր Դաշնակցությունը, մյուս ձեռքով քննադատում Դաշնակցությանը: Դա լավագույնս հիշեցնում է հավատաբնուող միջնադարի՝ եկեղեցական քարացած դոգմաների ու ավանդական շարքին ժամանակահատվածը, երբ բանաստեղծները կյանքի կարտոտը երգելու համար Աստուծո ներքող պիտի ասեին:

Այն խոհերն ու ապրումները, որ արտահայտում է դեռ 1925-ին գրված «Հանգուցյալ պարոնը կամ պարոն հանգուցյալը» պատմվածքի դաշնակցական հերոսը, նաև Չարենցին են: Հռոմում Չարենցը, որին հավատացրել էին, թե Դաշնակցությունը մեռած է ու գերեզմանված, վերագտած բախտի ու հավատի նման հանդիպում է «հարություն առած» դաշնակցական հերոսին՝ վերստին նույնացնելով նրան Բրիտանի կերպարին, նրա միջոցով բացելով իր մտածումները: Ամբողջ պատմվածքը որդոված է Չարենցի զգացման համակրանքով ու ներքին սիրով: Ասելիքը դնելով խորքում՝ Չարենցը խոսքը վերջացնում է անհարկի քննադատությամբ՝ իր քաղաքական վերաբերմունքը չբացահայտելու համար:

1933 թ. գրած «Մահվան տնսի» պոեմում, Չարենցը, ուրվագծելով հայ ազգային-ազատագրական շարժման նվիրյալների ողբերգական ու վսեմ կերպարները՝ Բաբի, Սիրիյան Հայրիկ, Բրիտանափոր Միքայելյան, Սիմոն Զավարյան, Ռոստոմ Չորյան, Միսանյաթ, Վարուժան, Ահարոնյան, Խաժակ և ուրիշներ, և նրանց հետ որպես հավաքական ուժ՝ Դաշնակցությանը, չհավաստելով ինքն իրեն և պատմական ճշմարտությանը՝ Դաշնակցության հիմնադիր-խորհրդանիշներից մեկի՝ Բրիտանափոր Միքայելյանի մասին գրում է.

Ես սրտի փոխարեն ունեի իմ կրծքում պողպատ գապանակ,
Անձամոթ էր կյանքում ինձ համար ամենայն վարանում ու մահ,
Մեր երկրի արի այրերից կազմեցի ես մեծ մի բանակ,
Եվ մեր սև դրոշի վրա գրեցի «Հայրենիք կամ մահ»:

Գնացին նորա, այդ արի գինվորները, Երկիրն Ավետյաց,
Տիրում էր այնտեղ բռնություն, և՛ ոճիր, և՛ կյանք անազատ.
Գնացին նորա՝ սրբելու մեր դեմքից նախատիներ ու լաց,
Բայց երկիրն այրյալք որդողեց տագնապած Արքան այն գազան:

Այս խոր ընթացումն ու պատկառանքը Չարենցն ուներ Դաշնակցության հանդեպ, ինչքան էլ բացարձակ չխտատվաներ: Չարենցի ճանապարհը ևս նրան տանելու էր ինքնագոհաբերության, և Գողգոթայի նոր խաչափայտին գամվելուց առաջ բանաստեղծի միտքը պիտի շաղափեր այս տանջալի խոհը.

¹ Գ. Նժդեհ, Հատրնտիր, Ե., 2001, էջ 146-147:
² Ս. Աղաբաբյան, Եղիշե Չարենց, Ե., 1973, էջ 438:

-Ի բրև Տիտ՞ու եւ արդոք յառ բարձրանում,-
Թե՞ ավագակ եւ լոկ դու մահապարտ...
Պիղատո՞ւ է արդոք այսօր ամեն մի մարդ,
Որ քո հանդեպ ձեռքերն է լվանում...
...Ունե՞ս արդոք, հոգի՛ս, անագորոյն նժար,
Որ նժարես այս խոհն անկշռելի
Չարչարանքիդ այս սև կնագիշերին...

Տիշենք, որ Չարենցի հոգևոր աշխարհում խաչին գամված առաջին հերոսը դաշնակցական Մագույթի համոն է: Մի դեպքում խաչելություն թուրք հորդանների, մյուս դեպքում՝ բոլշևիկյան իշխանության կողմից: Երկու դեպքում էլ խաչելություն Նաիրիի ճանապարհին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղաբաբյան Սուրեն, Եղիշեն Չարենց, Ե., 1973:
2. Գասպարյան Դավիթ, Եղիշեն Չարենց: Հայոց բանաստեղծության մայրաքաղաքը, Ե., 1996:
3. Գարեգին Նժդեհ, Հատընտիր, Ե., 2001:
4. Եղիշեն Չարենց, «Երկիր Նաիրի», Ե., :
5. Թամրազյան հրանտ , Եղիշեն Չարենց, Ե. 1981: